ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

ԵՄ-ն էներգիայի համար. Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում. էներգետիկ վիճակագրություն և քաղաքականության մշակում



Իրականացման ժամանակահատված: 01.07.2021 - 30.06.2025

ԱԼԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 3 700 000

Ընդհանուր բյուջե: € 3 700 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of European Energy Regulators (CEER), Energy Community, The International Energy Agency (IEA)

Նախագծի նկարագրություն:

ԵՄ աջակցությամբ և Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) կողմից իրականացվող «Արևելյան գործընկերության երկրներում մաքուր էներգիայի անցման խթանում. ԵՄ-ն էներգիայի համար ծրագրի II փուլ, բաղադրիչներ 3-6» ծրագիրն աշխատում է Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների հետ՝ նրանց աջակցելով էներգետիկ անվտանգության ամրապնդման, մաքուր էներգիայի ֆինանսավորման համար ներդրումային խոչընդոտների վերացման և էներգիայի խառնուրդում վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման ջանքերում:

Ակնկալվող արդյունքներ:

- Մեծացել է էներգետիկ քաղաքականության շուրջ որակյալ տվյալների և լավագույն պրակտիկաների ուղեցույցների վրա հիմնված ընդհանուր որոշումների կայացման ներուժը.
- Էներգետիկայի ոլորտի հաստատուն, կայուն և չափելի զարգացում.
- Էներգետիկ ոլորտում զարգացումների մասին իրազեկվածության բարձրացում, բարելավված տվյալներ և քաղաքականություն՝ վեբ ներկայության միջոցով.
- Ազգային վիճակագրական գործակալությունների ամրապնդված ներուժ.
- Էներգաարդյունավետության ցուցանիշների շարունակական բարելավում: